

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչխարխ	հաւար
Տարեկան	12 Ժր.
Վեցամսայ	6 »
Արսասահմանի	
հաւար տարեկան	15 »
Վեցամսայ	8 »

Ստերիկայի	հաւար
Տարեկան	3 ցր.
Վեցամսայ	1.50 »

Ծրանդան սողը սառ
 ղին երեսին հաւար 40 ս.
 իսկ վերին երեսի հա-
 վար 20 սակրիս Ե. երե-
 քին աւելի անգամներու
 հաւար 20 0/0 գեղջ կըլլ

Վառնայի հաւար ձևոք 10 սակրիս

ՉԱՐԹԻՍ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂՈՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐՏՎՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

Նախկին և նորագործական հաս-
 ցիկն .

Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Charjoun“
 Varna (Bulgarie)

Արսասահմանի հաւար
 ձևոք
 (20 ՍԱՆԹԻՄ)
 Պոչխարխի հաւար
 ձևոք
 (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք և չիկ սրտիք

«ՉԱՐԹԻՍ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՇԵՆԿԻՆԸ ՊԷՏԻ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎՃՍՐԷ

ԻՍ ՎԻՇՏՍ

Ամեն սոսու, երբ իրենի մա՛յր սրջսոյս,
 Իր հուր-ձոցիկն արեգ-մանջը վառահեղ,
 Եւ երբ գաւրնուն խոր քրտիկն՝ դ՛աւաբոյս,
 Եւրոք ծաղիկներ՝ բուրմուսուտէս, կարմրս գեղ.

Ամեն անգամ, որ սոխակ մը սիրագեղ
 Թառի՛կ հրպարս վարչի մը քոյ՛ սևոր կո՛յս
 Բաժկիկն խրամ զոյիկն զինով, խելաշեղ,
 Եւրոք ծաղիկներն քնուսարած, յի՛ յոյս .

Ես կը յիշեմ ո՛ր յա՛յն դաշտեր կան քաջոր
 Ուր բոցնեցաւ ծրլած վարդ-սգ մը հաւնոր
 Ժանկ հիւսիսի սառնը շունչիկն ազդրած :

Եւ վարստել ի՛ն վիշտերս, ի՛ն սարսուռ,
 Մըքիկն հոգոյս խորք ծրնոյ գաւր սուր
 Անկարճի կ գոցե անյն իսկ Ասրու՛ծ :

ՎԷՏԱ

ՍԵՆՔ ՍԵՉԻ

«Իրո Առ մէնիս»-ի վերջին թի-
 վին մէջ հայկական գաղտին ան-
 խնայ պաշտպանը : Բիէն Քիշեառ
 սա նշանակալից տողերը կը սպր-
 դեցնէ խմբագրական յօդուածին
 մէջ .

«Բայց մանաւանդ ինքն իրենց-
 մէջ հայրը՝ արեան ու պայքարի
 մէջ պիտի ձեռք բերեն իրենց
 ազատութիւնը : Այն քանի մը
 հերոսները, հրատապները, ան-
 ծանօթ ապստամբներ, որք զէմ կը
 դնեն Համբախան խոյստող շնե-
 յուն Սասունի մէջ, պէտք չէ որ
 երեսի վրայ ձգուին իրենց հայ-
 րենակիցներէն .»

Որքան որ ալ անվահեր ֆրան-
 սացիին ազդու հրաւերը իր մէջ
 ամէնէն ազնիւ բողձանքը, աս-
 պետական զգացման մը էն թե-
 լագրող արտայայտութիւնը պա-
 րունակէ, բայց անիկա չի գաղ-
 թիր նաեւ յանդիմանութեան մը
 յատկանշական գրոջմը կրելէ՝
 ուղղուած մեզ՝ արտասահմանի
 հայերուս . կամ թէ տե հասարակ
 այն ամէն հայերուն որանք յաւեա
 կամ նուազ ապահով նիստակց
 մը յարմարեցած են իրենց, և

չատ հեռու են ունենալէ զարհու-
 րելի կացութիւնը, որուն մատ-
 նուած է Հայաստանի դժբաղդ-
 հայութիւնը, ամէն ժամանակ .
 Ամօ՛թ մեզի որ այս տեսակ
 թելագրութիւն մը օտարէն ըն-
 դունելու ինկածութեան մատ-
 նուած ըլլանք ինքզինքնիս : Ա-
 մօ՛թ, բիրաւոր ամօթ մեզի որ՝
 մեր էն տարրական պարտկա-
 նութիւններուն մէջ զանցառու-
 թիւնը այն գերագրական աս-
 տիճանին հասուցած ըլլանք,
 ուր՝ օտարը լեզու ելլայ և ազ-
 նիւ ձեւերու տակ էն շուարեց-
 նող ու էն շիկնեցուցիչ կշտամ-
 բանքը շարտէ մեր երեսն ի վեր :

Ո՛րք են առանց մէկ կուտ տա-
 լու մեծազորդ ապստամբութիւն-
 ներու կազմակերպումը պահան-
 ջող մեր հարուստները, Բայց ա-
 հա եւրոպայի մէկ անկիւնէն՝ օ-
 տար ձայն մը կը պոռայ մեզի
 թէ Սասունի մէջ Հոմերոսի ար-
 ժանի զաւակներ կուրծք կուտան
 ամբողջ բանակալութեան մը,
 ժայռերու հաստաբետ զանգուած
 ներ պատնէջ առած՝ թոյլ չեն
 ի տուր որ մեծ խոյստողիչը ան-
 մեղներու արեան մէջ լող տայ,
 խղզուի նորէն :

Անհնարինը պահանջող մեր զը
 րամատէրներուն այտին փակ-

ցուած այս շնորհալից ապստակը
 պէտք է որ անհունօրէն իր հն-
 չիւնին ալիքները տարածէ տար-
 տողէ չորս դին, իր պարոյկ-
 ներուն մէջ առնէ խօսքէ, վիճա-
 կէ չհասկցող այն արարածները
 որ անկարելի սրտով, պաղ աչ-
 քով հանգիստեա կըլլան իրենց
 եղբայրներուն ու քոյրերուն աս-
 տիճանական ոչնչացումին :

Ասիկա, սակայն, ամէնապղ-
 տիկ օրինակ մըն է հայ հասա-
 րակութեան անտարբերութեանը
 հանդէպ սուրբ գործին : Այս
 անտարբերութիւնը ի՛նչ ահեղ
 համեմատութիւններ առած ըլ-
 լալու է որ՝ օտարներ հարկ ան,
 հրաժեշտ դասեն մեզ վզացնելու
 մեր ընկելքը ճիշդ այն միջոցին,
 ուր մեր գաղտին աշուտոցի ջա-
 տագոյնէրը ներքոյներ կը հիւ-
 սեն հայ ցեղին նկարագրին շուր-
 ջը, ասիական ցեղերուն էն ըն-
 աթրը կը հաչակեն զայն ու գե-
 րագանցօրէն արժանի կը դատեն
 այն աղատութեան որուն կը վա-
 դէ ան արեան հեղեղներուն մէ-
 ջէն :

Չէ՛, անմարտելի պղտիկու-
 թիւն է աս : Կրնայինք, մեր
 ձեռքն էր ասանկ ամօթալի բս-
 տորնութեան մը շմատնել աղբին
 վարկն ու պատիւը Զոհողութիւն.
 ներուն էն յետինը առաջը պի-
 տի կրնար առնել այսօրինակ բա-
 րոյակուն ցաւագին հարուածնե-
 րու, որոնք՝ ախ մը անգուգա-
 կան քաջերու թողած շլացուցիչ
 ապստամբութեան քողի ի վեր հա-
 յութեան մեծ զանգուածին ան-
 դիտակցութեան, անզգայութեան
 և ապիկարութեան վէրքերը ե-
 րեսն կը բերեն, մերկապարա-
 նոց ցոյց կուտան :

Աւտակալին շատ շըներ որ Ա-
 մերիկայի մէջ կարգ մը անհաս-
 կնալի արարածներ՝ մեքենայու-
 թիւններուն ամէնէն դժոխայի-
 նին ու եղբունականին կը դիմէ-
 ին արգիլելու համար այն ճգրա-
 մական նպաստներու հաւաքումը,
 որոնցմով օգնութիւն պիտի զը-
 կուէր Սասունի առիւծներուն : Որ-
 քան որ ալ հաւատարմութիւնք բան

չըլլայ աս, կատարուած իրողու-
 թիւն մը ըլլալէ չի դադրիր :

Այո, աս է տակաւին հայու-
 թեան մեծ մասին բռնած գիրքը
 իր եղբայրներուն, իր քոյրերուն
 քաջած անժուժելի տառապանք-
 ներուն հանդէպ, և օտարը,
 ցնցուած, համբերութիւնը սպա-
 սած, մեր պարտականութիւնը
 կը վաղէ պոռալ մեր երեսին :

Արդեօք իրա՞ն զեռ անտարբեր
 պիտի մնանք :

Շաւարշ

ԱՆՁԱՏ ՆԻԻԹԵՐ

Անակնկալի կարգը չանցնիր այն
 ցաւալի յայտնութիւնը զոր բաւ Շար-
 ժում իր վերջնութիւն թիւին մէջ, ուր Հն-
 չակեան կեղծոյնի ելեք անգամներուն
 մեղադրագիրը կար միւս երեք անգամ-
 ներուն դէ՛մ որոնց մէջ տեղը եկած
 սպրդած է պատուելի մըն ալ :

Թէ՛ ո՛րքան լիազօր է այդ պատ-
 ուելին որ զրկուած է Ամերիկայի
 Հնչակեաններէն, մինչդեռ ուրիշ տե-
 դեր ալ Հնչակեաններ կան որոնց
 ներկայացուցիչը չէ սակայն . առիկա
 մեզի չի վերաբերիր, մանաւանդ չենք
 ալ հետաքրքրուիր զիտնալ այն
 գերագանց պատճառով որ Լոնտոնի
 Հնչակեան սմբողջ խումբը արդէն
 անհամաձայնութեան մարմնացումն է
 և հոն պատուելի մի միջամտութիւնը
 կրէք չփրկել կացութիւնը :

Արդէն անոնք որ ու՛շի ու՛շով հե-
 տեւեցան Հնչակեան կուսակցութեան
 վերջերս կրած փոփոխութիւններուն,
 բռնած ընթացքին և խորն դաւոր
 միտքեան, կերեւակայէին թէ ուշ
 չէր այն օրը ուր հերձուածը պիտի
 լինար մէջերին, վասնզի նախ կեղ-
 րոնի տարրերը շատ անկեղծ միւս-
 թիւն մը չէր որ կատարած էին և
 երկրորդ՝ Արիւրեան, այն յաւիտե-
 նապէս պատակիչ զոյի՛ն ըստ Գամէր-
 Արշաւրի յաջող որակումին, կը դաւեր
 շարունակ և իրեն դուրս ինչպէս
 վրէժը լուծել կուզէր :

Վերականգնուող Հնչակեանները գրե-
 թէ բուն մ, ացան հիներուն հետ որպէս
 վր Դաշնակցականները կարեւոր քայլ
 մը անեն դէպի միութիւն . դարձեալ
 Ամերիկայի հայերը առ երեստ միւս-
 թիւն մը ստեղծելին մէջընդմիջ որ ճն-
 շււմ մը, ստիպողութիւն մը գործեն
 ժընեւի պիւրօին վրայ ու միութիւնը,
 այդ երանելի և բազմաթիւ վիշի, հ-

Այնքան անհոգ և անբարեկամ իրազոր-
մանը, սակայն յայտնին պարագր
եղաւ : Դաշնակցութիւնը պարագր
զգաւ ո՛չ Ամերիկայի հայերուն միու-
թիւնը և ոչ ալ հինքերուն և նորերուն
համաձայնութիւնը ու միութեան խն-
դիրը միայն հոն որ էր, եթէ սա-
կայն զէպի եւ ջնահանջեց :

Չանց կըրնենք անձնաւորութիւն-
ներու վրայ ծանրանալ՝ քննադատելու
համար Դաշնակցականներու վերա-
պահութեան պատճառները բայց այ-
սոր ուրախ ենք որ դաշնակցական-
ները ծուղակը չլինեան : Եթէ ժընձէի
պիւրօն ամենափոքրիկ սխալ քայլը
առնէր այս խնդրին մէջ և միու-
թեան սկզբնաւորութիւնը կատար-
ուէր, ի՞նչ անխոստովանելի էնթրիկ-
ներու պիտի գիմէին արդեօք Հնչակ-
եանները քակելու, քայքայելու հա-
մար իրենց հետ նաեւ Դաշնակցու-
թիւնը, որ օր աւելի կը զօրացնէ
իր կարգերը :

Ճշմարտապէս խորունկ կերպով կը
ցաւինք Հնչակեաններու այս պա-
ռակտու մին վրայ, ոչ թէ անոր համար
որ իրենց զանազան խումբերուն մէջ
ալ անհամաձայնութիւն պիտի լինայ,
ինչ որ անշուշտ շատ հեռու չէ, ալ
անոր համար որ միութեան վրայ աջ
անկամ չէզոք հայութիւնը անգամ
մը եւս պիտի ըմբռնէ թէ մեր յեղա-
փոխականները չգիտեն իրենց շահե-
րուն և ստոր հաշիւներուն սանձ մը
զենել մաքառելու համար հասարակաց
թշնամիին զէմ, ու եթէ օրինակէն հե-
տեւութիւն մը հանել մտածուի,
այդ հայերը անշուշտ պիտի հա-
մարան իրաւունք ունենան չվտարելու
Հնչակեաններու հրաւերին և թէ
ո՛րքան անկարելի է կազմակերպուած
ու հաստատ հիմերու վրայ զրուած
կուսակցութեան մը միացումը անո-
րոջ, քանուցի որ տարբեր կազմուած
խումբեր մը հետ :

Հնչակեանները պարզապէս ընտա-
նեկան տրամագծով մը ներկայա-
ցուցին մեզ. երէկ ամուսնացան և
այսօր ապահարզան ըրին. իրաւ է
թէ կըրնամուսնութեան մը յոյսերը
պակաս չեն, բայց Դաշնակցական-
ներուն համար այդ ամուսնութիւնները
ապօրէն պիտի մնան միշտ և միու-

թեան կուսութիւնը պղծուած՝ ամէն
ժամանակէ աւելի մահաւանդ հիմա :

Երկու անգամ է որ Միւնի Կանցի
բաժիններ կը հրատարակէ Շարժելի
մէջ ու Շաւարշ ալ նախաջողուած մը
նուիրեց այդ նիւթին :

Մեր մասնունկերը կը թեւորեն
մեզի յայտնելու թէ այդ կարգի յօդ-
ուածներով մատերնիս երբէք վէրքին
վրայ զրամ չենք ըլլար :

Հայ կիները իրենց պարտականու-
թիւնները ամբողջովին կատարելու
անհոգութեան մէջ ինկած են՝ պար-
զապէս իրենց ստացած դաստիարա-
կութեան և ազգային ոգւոյն նկատ-
մամբ անոնց ունեցած տգիտութեան
պատճառաւ :

Մենք ամէն ջանք կը թափենք արու-
սեռին զարգացման համար, առանց
մեծ քան մը ընելու իրական սեռին
դաստիարակութեանը համար :

Չեմ յիշեր Պոստ մէջ վարձարան
մը ուր կնոջ լատագոյն դաստիարա-
կութիւն մը առելու ծրագիրը կեցած
ըլլայ :

Տարիներով Միւնի րեսան մը աղ-
ջկանց վարձարան ունեցաւ, ու ոչ մէկ
չօղակելի արդիւնք տուաւ. թաղային
վարձարանները երբէք չգտակեցին
մեր յոյսերը, բացի Օրթագիւղի Հօփ-
սիմեանցը և Սպանուէր Հայուհեաց
ընկերութեանը որոնք միջակ կարու-
ղութեան աէր ուսանողու հիմեր միայն
հասուցին :

Փոխակերպ մեր ծրագիրները. տանք
աղջկանց հարկ եղած ստոյգ զատար-
ակութիւնը և այնուհետեւ միայն
միտանք անոնց քով ախար կիւնը
որոնք զգան, դրդուին և կատարեն
իրենց հանրային և անհատական սար-
տակատութիւնները :

Գիտութեան շարժուած պարք ձեռ-
նարկները թող չլլացնեն մեզի. այդ
կարգի զէպերը բազմաթիւ են և ոչ
մէկ հատ, ինչպէս կը կայծէ Միւնի
իր սահմանափակ սեռութիւններուն
մէջ :

Նորածնութիւնով և բամբասանքով
ապրող կիները միշտ գոյութիւն պիտի
ունենան մեր մէջ, բայց անոնց քով
հասցնենք նաեւ մաքուր և առողջ
տարբեր. առկա դաստիարակութիւ-

նով կըրլայ և ոչ թէ յօրուածներով,
որովք չեն կարգացող անգամ ու
կի՞ն կարգացուն ալ անտարբեր կը
ձգեն զեղեցիկ սեռը քանի որ անոնց
իրաւացի կողմերուն վրայ խորհրդա-
ծելու շահ մշակուած միտք պատրաս-
տած չենք :

ՍԼՍԲ

ԿՆՈՋ ԼԿԱՆ ԽՍՍՈՒՆՈՒՄ

—Պարագ սուրբ մի պնդէք, միւ-
սիւ, իմ սկզբունքիս հակառակ է զա-
ւակս Ազգ. վարժարանի գրկել :

—Բայց, տիկին, կազաչեմ մտիկ
ըրէք :

—Ձէ, չէ, անկարելի է. և ար-
դէն ինչու՞ զրկեմ, իր զարգացն շատ
գո՞հ եմ, մահաւանդ որ լաւ բոլորի՞մ
ալ պիտի ստի՞ն. տեսէք, որքան
կ'աշխատի գիշերները. կը նստի և
անգաղար կը գրէ, կը գրէ, կը գրէ :

Այնքան աշխատեցաւ որ ամիս մը
հիւանդ պառկեցաւ. բժիշկը բտա-
թէ տարբերին համեմատութեամբ չէ-
իր աշխատանքը. բայց ես շատ կա-
րեւորութիւն շտուի, անոնց ամէն
ըսածին եթէ նայի՞նք... Հարկաւ դուք
ալ իմացաք այլ կանա հիւանդութիւ-
նը. որովհետեւ ամբողջ յաղագացին
լսեց թէ ի՞նչ աղջիկս ըսած յառաջյի-
մութեանն ինչպէս ստու :

—Ձեզի տիկին :

—Շատ զարմանալի է. ի՞նչպէս
չէք իմացիր. ես կը կարծէի թէ լը-
սողիւնները իսկ պիտի հրատարակե-
ին. որովհետեւ տիկա շատ սովոր-
ական զէպք մը չէ. նմանօրինակ
զէպք մը պատահած է Ազգ. վարժա-
րանի մը աշակերտներուն :

—Հո՞ս է մեր պատկը, տիկին :

—Այո՛. Ելիզաւիթ, հոս եկիւր :

Աղջկը՝ որ հազիւ 14 տարեկան
կ'երեւնար, կեղծ շարժումներով
մտնեցաւ և :

—Ձե՞ս ուղեցիր, մտնա՛ :

Այս վերջին բառը այսպէս անց
ծիչք անձարակ զերասանի մը պէս,
որ իր դերը գէշ սորված է :

—Միւսին հասնելու կուգէ թէ
ինչ գիրքեր կը կարդաս, ըսաւ մա-
ման, ստպարձ շեշտով մը :

Աղջկը խել մը գիրքերու անուն-
ներ թուեց, զորս չեմ յիշեր հիմայ :

վարժարան կամ վարժուէի ըլլալու է
այդ անվերջ գասագրքերուն անուն-
ները կարենալ սորվելու համար :
Ուսուցիչ պարունին խորին գործա-
քէ՛ն և ասլուքներէն զուշակեցի թէ
տարբերակ հակասութիւն մը կար
աղջկան տարբեր և Կ'տեւած գա-
ընթացքին մէջ :

—Էյ, աղջիկս, գոնէ կը հասկնաս
այդ կարգաւորները :

—Ոչ, հիմա չեմ հասկնար, բայց
մեր մակղիլը կըսէ որ երբս մեծ-
նամ, այն ատեն գիտաւ պիտի հաս-
կնամ :

Մեղքներու ունայնամտութեանը
այս սովորական գրուածք արձանագ-
րած պահուս, չեմ կրնար ինքզինք
զսպիլ յիշելու անոնց անմտութիւնը
զգուող զաւելջական ուրիշ շատ ա-
ւելի ցայտուն դրուածք մը, աւելի
քան իրական :

Յայտնի է որ մեր մէջ դաստիա-
րակները զմեզան հակարակներ կը
նրկայացնեն. խղճամիտին, պար-
կիշտին քովի ի վեր կը ցցուին շա-
համուներ, գունդիկ խառնութեաններ
եւ անխղճ շահագործողներ. բայց
անոնք, աղէկ կամ զէշ, կատարեալ
հոգեւաններ են. և անոնցմէ ան-
խղճները գիտեն կերպը ստամբ
ծնողներու ետ գգուելու. այս ան-
խղճներէն հատ մը անսամ եմ. զոր
կարծէ գիտել, երբ հարուստ ծնող-
քի մը կամ պաշտպանի մը հետ կը
խօսի :

—Բարեւ, միւսիւ, ի՞նչպէս է
մեր տղան :

—Օյ, ձգէ՛, կըսէ. աչքերը ակնա-
կապիտներուն մէջ թաւալելով, օտի-
միւնչ միտք մըն է :

—Ի՞րաւ կըսէք :

Անոր համար բարձր հարուստ աշա-
կերտներ օտիմիւնչ էլին կամ ապա-
դայի նշանաւոր տիպարներ :

Օրինակի համար, եթէ տղան իր
ընկերքը փոխ առած երկու թիւթի
թուղթը պահանջէր, այդ կը նշա-
նակել թէ նշանաւոր վաճառական մը
պիտի ըլլար. եթէ գրչածայրը շուտ
մը գրչակալին անցընէր, մեծանուն
արուստագետ մը պիտի ըլլար. իսկ
եթէ զիպուածով ամփոփ նախադա-
տութիւն մը շարագէր, ալ ար-
ներկայութեան սահմանաւոր էր ինքնա-
ալ պարագէս մը ըլլալու :

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ
ԵՒ ԻՌՈՊԱՅԻ ՊԱՐՏՔԸ

(Բանաստեղծութիւն է. Պէդուարայի)

Այն ժողովուրդը որուն պատմու-
թիւնը կամ մահաւանդ տառապանքն
ու ճակատագիրը պիտի զրաղեցնեն
մեզ այսօր՝ այս հաւաքման օրակար-
գին համաձայն, կը բնակի մենկ
շատ հեռու, միջազգային առեւտրա-
կան մեծ ուղիներէն մէկուսի, եւ շատ
հեռի չէ այն ժամանակն ուր համե-
մատապէս քիչ մարդիկ գիտէին անոր
գոյութիւնը : Շատ աւելի քիչ մար-
դիկ ճիշդ կերպով գիտէին թէ ի՞նչ-
պէս կարգէր հայ ժողովուրդը և ի՞նչ
պայտաններով կը յաջողէր տեսել :
Իր պատմութեան կը հետաքրքրուէին
միմիայն փոքրաթիւ աշխարհագիր-
ներ, պատմագէտներ և անոնք որ
քաղաքակրթութեամբ կը զրաղին ա-

մէն տեսակետով :
Բայց զուցէ բսէք. մեր մօտ չու-
նի՞նք ամէն տեսակ տառապանքներ
և կեղեքումներ, որոնցմով կարենա-
լինք զրաղիլ, ստանց երթալ փնտռե-
լու շատ հեռուն, փոքր-Ասիոյ կոր-
սուած դաւաճաններուն մէջ և շահ-
քրդոսիլ հոն անցած դարձածին :
Սակայն հալածանքնու անգուծ վայ-
րաք հարստահարութիւնները ոչ ոնց
կենթարկուին միշտ հայերը. անտիկ
տարապայման հանգամանք մը ունին
որ անոնք կը պահանջեն ամէն քա-
ղաքակրթ ազգերու բողբոջ : Աստեւ
ատեն, անոնք շարժեցին յետադի ա-
կան կառավարութեանց խիղճն ի կ
և հարկադրեցին զանոնք ուշադրու-
թիւն դարձնելու այս ժողովուրդին
կացութեանը վրայ : Ասկէց զատ
հայերուն ճակատագիրն ու կացու-
թիւնը մեզ կը շահագրգռեն զանա-
զան հայեցակէտերով, շատ աւելի
քան որ անիկա չերեւնար մենք շա-
տերուն՝ առաջին անկարկով : Հայ
ժողովուրդը կը գտնուի կեցողուն այն
խոշոր խնդրին զոր Արեւելեան իրեն
գիր կ'անուանեն, խնդիր, որ, օրին

մէկը, զարձեւ ծանրապէս պիտի
մտադրազէ քաղաքակրթ ժողովուրդ-
ները, պիտի խանգարէ արեւմտեան
ազգերու խաղաղութիւնը, զժողու-
թիւն պիտի ձգէ այդ ազգերուն մէջ,
և այս պատճառով իսկ պիտի կրնայ
յամեցնել քաղաքակրթութեան ըն-
թացքը :
Մարդասիրական ամէն նկատումէ
զատ, հայ ժողովուրդին ճակատա-
գիրը պարտի մեզ զբաղեցնել ուրիշ
տեսակէտներով : Եւրոպան, ու Եւ-
րոպայի հետ գերման ժողովուրդը
ուղղակի յամաճարութեան մը ունին
հայ ժողովուրդին հանդէպ : Մեր
գերման կառավարութիւնը, եւրո-
պայի միւս աղլիւրուն հետ համախոր-
հուրդ, 1878 յուլիսին, Պերլինի վե-
համագովին մէջ, վերջին ուսուելութիւն
պատերազմէն ետքը, ոչ ոչ յանձնա-
տութիւններ ստանձնեց հայ ժողու-
վուրդին նկատմամբ և այսօր ժո-
ղովուրդները պատասխանատու են ի-
րենց կառավարութեանց արարքնե-
րուն : Գլխաւորաբար երբ խնդիրը
կը գտնուայ մարդասիրութեան և
արդարութեան պահանջուց երեւ վրայ

և Երբ կառավարութիւնները չեն
կատարեր ստորագրուած պարտու-
թութիւններ, ժողովուրդը կի՞նայ
ազգուօրէն յիշեցնել այդ կառավա-
րութիւններուն իրենց պարտքին կա-
տարուը :
Հայերը, հալածուած, կեղեքուած,
ջախախտուած, միմիայն յոյսերն
գրած են Եւրոպային իրենց գողթ
օգնութեան վրայ. յոյսով և ան-
համբեր սպասումով անոնք անձկա-
նօք կը դիտեն մեծ պետութեանց ա-
րարքը, ընթացքը մեծ ազգերուն ո-
րոնք, Պերլինի դաշնագրին պարտ-
նակութեանը համաձայն, ստիպուած
են օգնութեան հասնել իրենց պաշ-
պարելի գիրքեր բռնութեանց զէմ ո-
րոնց միակ նպատակն է ելլիլ ան-
հետացնել հայ ազգը :
Գուք ամէնքդ գիտէք 1877-78ի
ուսուելութիւնը պատերազմը՝ անի-
կա վերջացաւ, թուրքիս պարտու-
թեանը, որ, կորովի գիմադրու-
թեան մը ետքը, յաղթուեցաւ Հօփ
Ռուսիային՝ զաշխարհամ Ռուսիայի
և ուրիշ սլու ժողովուրդներու :
1878 մարտին, Ռուսիան կը պարտա-

Թեանք:

—Հայրդ դեռ կայրի՞, կը հարցնէ անոր ձերունի լեռնականը:
—Այո, էֆէնտիս. անիկա կը ցաւ փախչիլ, բայց անիկա կը մեռնի վշտէն երբոր իմ մահս իմանայ:
—Կեանքդ կը շնորհեմ: Տունդ դարձիր, փասնդի ես ինքս այնքան տառապեցայ որ անկարելի է որ չըթամ ձերունի հօր մը...
Խոշոր արցունք մը կը սրբէ, ձերունին դաշտնով կը կտրէ գերիին կապանքը, իր հագուստը անոր կուտայ, անորը ինքը կառնէ եւ գայն իր գեղը կը զրկէ Ձէյթունցիի ծայտուով:
Միևսու Չեւազ
(էս Ռոզիւ տ'էօրօպ)

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Նարաթ գիշորը առաջին անգամը ըլլալով Պապեան թատերախումբը ներկայացուց «Վասպուրականի հերոսները»:
Պետերգ է թատերգութեան երկրորդ բացատրելի վանի 1896 յետադիմական դէպքերէն առնուած է և ներկայացնէ իրական պատկեր մը:
Պետոն կը ներկայացնէր Պապեանը, որ իր անվեհեր սէգ շարժուածքներով թատերաբեմին վրայ կը պատկերացնէր հայ ֆետաիի խորտակմանը:
Գալէճեանը՝ տէր կ'օմիտաս եղած էր, իր կեղծաւորի շեշտերով, շարժուածքներով կատարեալ դատարան թատերային թիֆիֆը կը ներկայացնէր:
Հայաստանի բարենորոգիչ հարթի փաշան եղած էր Օ. Սէմէրճեան: որ նոյնպէս յաջողութեամբ խաղաց իր դերը:
Ձանց կընենք յիշատակել խաղի միւս դերակատարները, որոնք յաջողութեամբ կատարեցին իրենց դերերը:
Այս առթիւ մեր շնորհաստութիւնները կը յայտնենք խումբի առաջնորդ՝ Տիար Պապեանի, որ լաւ ըմբռնած է դերասանական արուեստը և պերասանի պարտականութիւնը, ջանք և զոհողութիւն չի խնայեր ներկայացումներու շքեղութեանը և հազուատներու մաքրութեանը: Թատերասէր սովորները պարտքն է քաջալերել և միանգամայն զօրավիզ ըլլալ սոյն նորակազմ թատերական խմբին, որ արուեստի սիրուն ամէն զրկանք յանձն տունելու չընկրկիր:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Յիւլիէ կը գրեն:
Անմոռանալի Պետոսի և ընկերներուն յիշատակին գեկտ. 1 կիրակի առտու հոգեհանգիստ պիտի կատարուի տեղոյս եկեղեցիին

մէջ և իրիկունն ալ կոկիկ հանդէս մը:
Երգեցիկ խումբը պատրաստուած է պատարագի արարողութիւնը քառածայն կատարելու:
Տարակոյս չի կայ թէ տեղոյս հայ հասարակութեան սրտի տէր գասակարգը պիտի փութայ իր յարգանքը ընծայել հայ հերոսներու անմահ յիշատակին:
ԵղթԱրիՅ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱԿԵՆՈՆԻԱ

Թուրք զինուորներն ու պաշտպօղտ քննրը ձուժայէն վերջը հիմակ ալ Բաղսղի ժողովուրդին վրայ կը թափեն իրենց կատաղութեան մաղձը: Կիներուն, աղջիկներուն պատիւը, ամբողջ ժողովուրդի մը կեանքը խաղալիկ դարձած է վատ նիզամներուն ձեռքը: Կայրեն, կը սպաննեն, կը բռնաբարեն պահուած զէնքերը պահանջելու պատրուակին տակ, խեղճ գիւղացիները ստիպուած են թուրք զօրքերէն զէնքեր գնելով կրկին անոնց ներկայացնել իբր թէ մընչև հիմա պահուած էին:
Համարին բարենորոգումներն են որ կը գործադրուին կոր:
— Մակեդոնիոյ ժողովուրդը չկարենալով տուկալ իրեն շնորհուած «բարենորոգումներուն» մաս առ մաս կը շարունակէր գաղթել: Տեղեր ալ կան, ուր գիւղացիները ճարահատ կրկին զէնքի կը դիմեն:
Քօչարիներն ու զենազիր մը կը հաղորդէ որ ամոռոյս 20 ին Բատէժի և Թրօսքօյի գիւղացիները մեծ կ'աւ ունեցեր են թուրք գօրքին հետ: Հաւատացեալներէն 28 հոգի արքայութիւն զրկուցին:
— Անցեալ օր պաշտօնապէս յայտարարուեցին Մակեդոնիոյ բարենորոգումներու յանձնախմբին անդամները, որոնք անձանով պաշտօններ են բոլորն ալ թուրք: Նախագահ նշանակուէր է Յէրիտ փաշա:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Գեկա. 14 ին պիտի նայուի այն դատը, զոր գատարազը բացած է մէնէրալ Յօնչէֆի գէմ՝ իր արտորովայրէն հեռանալուն համար:
— Լիւլին լ'ուը՝ Պանգի գիւղին վրայ գտնուող Ս. Գրալ վանքը այրեր է ամբողջովին՝ կարելի չըլլալով ու կէօգնութիւն հասցնել:
— Սօֆիայի մէջ լուր տարածուեց է թէ կառավարութիւնը կեղծ զրամատմանը խնդիր մը ելեան հաներ է:

— Լիւլին լ'ուը՝ Պանգի գիւղին վրայ գտնուող Ս. Գրալ վանքը այրեր է ամբողջովին՝ կարելի չըլլալով ու կէօգնութիւն հասցնել:
— Սօֆիայի մէջ լուր տարածուեց է թէ կառավարութիւնը կեղծ զրամատմանը խնդիր մը ելեան հաներ է:

ՌՈՒՍՈՒ
«Տէլլի էքսորէտ» կը տեղականայ թէ Չարը մտադիր է գահաժառանգութեան ձեւը փոխել, սրպէսզի իր աղջիկներն ու թոռները իրաւունք ունենան ժառանգելու գահը: Աս ծրագիրը մեծ վէճերու պատճառ տուած է կայսեր և Միխայիլ ու Վլատիմիր գուքսերուն միջև: քանի որ այդ տեսակ կարգադրութիւնով վերջիններուն շահերը պիտի վտանգուին:
Չարը կը պատրաստուի եզերելու իր նահապետական վարչութիւն մը շնորհել, ժողովուրդին համակրանքը գրաւելու համար:
Ֆ Ր Ս Ն Ս Ա

Իտալիայի Երեսփոխանական ժողովը շատ ազդեալից և խառնաչիֆով կերպարանք մը առեր է վերջերս: Քուժան և Սիլվիոն նախատալից բառեր արտասանել են արգարագատութեան նախարարի հասցէին: Մեծ ազդեալով քուէարկուեց է երկու երեսփոխաններուն արտաքուստը՝ ժողովէն և վերջի վերջոյ նախարարպետ պ. Բօմպ փակեր է ժողովը:
Ա Ւ Ս Տ Ր Ի Ա
Փրանձ. Եօզէֆ կայսրը ժամանակէ մը իջկեր տկար է եզեր և հակառակ բժիշկներու խորհրդին գիշեր ցորեկ կաշխատի: Խորհուրդ արուեց է իրեն թէ ինք կատարեալ հանգստութեան մը պէտք ունի: բայց ինքը մերժեց է հեռանալիքը գործին գլուխէն և յայտ արարեց որ մտադիր է վերջ տալ Վիէնայի և Բէլլիթայի մէջ տիրող բոլոր տաղանայներուն, ոչնչացնել սահմանադրութիւնը և կառավարել առանց երեսփոխանական ժողովի իր իշխանութեան վերջին օրերուն ինչպէս եղած էր առաջին օրերուն:
Ս Պ Ա Ն Ի Ա
Նոր գահալիճը կազմուէր է պ. Սիլվիայի նախագահութեան ներքեւ:
Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն
Պուկարական գործակալութեան վերջին մէկ հեռագիրը կը հաղորդէ որ նոր նախարարութիւնը կազմուեց է պ. Տէլիեանի նախագահութեան ներքեւ:

Ա Ր Մ Է Ն Ի Ա
Լ ի ն չ ի
(Հեղինակի պատկերով և ինքնակենսագրութեամբ)
Գրեց
Պ. Տօնապէսեան
Գին
2 1/2 շիլին 1րբ. 25 կոպ.
3 ֆր. 60 սանթ
Գիծել աշխատատիրոջին.
117 կոստեֆին Բօս
Հեքիտիս'ս Բուֆ
Լօնսօն Մ.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՎԱԶԳԷՆ-ԵՐԳՈՐԱՆ
Լոյս տեսաւ «Վազգէն»-Երգարանը բանաստեղծութիւններու, ազգային յեղափոխական, սիրային և ժողովրդական երգերու ճոխ հաւաքածուն, որուն անհամբեր կ'սպասէր ընթերցասէր հոյ հասարակութիւնը:
600 մեծադիր երեսներէ բաղկացած, նախը թուղթի վրայ, հեղեցիկ պատկերներով զարդարուն սոյն երգարանը մեծ պակաս չը կուգայ լրացնելու մեր աղքատիկ գրականութեան մէջ:
Գինն է, ճամբու ծախքով 1. 50
Գնել փափագողները դիմելու են ք. Հօրանեան 379 Բ. Օ. Պօստ, Լիւն Մաս. (Ի. Ս. Ա.)
Ձեռքէ կը ծախուի նաեւ Հայրենիքի տպարանին մէջ
Հայրենիք Բուպ. Բօ.
61 հսսեկ Ս. Պօստի Մաս. (Ի. Ս. Ա. Արտասահմանի համար 7 ֆրանք
Պարսկաստանի համար 6 ֆրանք
Մանօթ. — Սոյն երգարանը որչափ որ քանի մը անգամ անհատական յանքերով հրատարակել է, սակայն ամբողջ հատկութեամբ յատկացուած է զուտ բարեօրական գործի մը ՀՐԱՍՍԱՐԱԿԻՉՆԵՐ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Գ Ր Ա Տ Ո Ւ Ն
Ա. Չ ա ր պ ն ա ն Է Կ Է ա ն Ի

Պատիւ ունիմ ծանուցանել Պուկարիոյ և Ռուսաստանի Հայ ժողովուրդին այս անգամ աւելի ճոխացուած եմ Գրատունս: Ամէն տեսակ զարգացական և վիպական գրքեր և օրացոյցներ ունիմ պատրաստ:
Հայկական քարդ փօսթալ կապը 40 սանթիմ:
Հայկական ընդարձակ երգարան հասար 2 ֆր.
Սմերիկայի ընդարձակ երգարան հասար 7 ֆր. 50 սնթ.
Հասցէ՝ Ա. ՉԱՐՊԱՆԵԼԻԱՆ
(Պուկարիա) Վարնա

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимость“ Вара.